



“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՆՈՇԸ ՈՐ ԻՆՈՒ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԵՐ. 16.


ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1888

ԹԻԻ 2

ՎԵՍՈՒՎ ԼԵՌ

Կ'ըսուի թէ աշխարհիս մէջ կայ իբր 225 հրաբուխ որ գտնէ մէկ անգամ բորբոքած են անցեալ դարէն հետէ: Անոնց հաշակաւորագոյնն է Վեսուվ, թէպէս կան քանի մը ուրիշներ ալ որ անկէ աւելի մեծ են: Պատմութեան մէջ յիշուած անոր առաջին բորբոքումը տեղի ունեցաւ յամի Տեառն 79, երբ անկէ արձակուած ահագին քանակութեամբ քարերով և մոխրով թաղուեցան Հէրքուլանում և փոքրէի երկու քաղաքները որ Վեսուվի ստորոտն էին, այնպէս յանկարծ որ բնակիչք ժամանակ չունեցան փախչելու: Այս քաղաքները փորելով յերևան հանելու գործողութիւնը յառաջ կը տարուի ցարդ, և դանուած են շատ մը հետաքրքրական բաներ որք կը ցուցնեն թէ իտալիոյ մէջ Ի'նչպէս կ'ապրէին մարդիկ ասկէ 1,800 տարի առաջ: Գրեթէ հազար տարուան մէջ՝ Վեսուվի միայն հինգ անգամ բռնկելը կը պատմուի, բայց ասոնց միոյն ժամանակը հովը անոր մոխիրը բերաւ մինչև Կոստանդնուպոլիս: Վերջերս այս հրաբուխը բորբոքելու մէտ վիճակի մէջ գտնուեցաւ, այնպէս որ 25 անգամ բորբոքեցաւ 1800 է մինչև 1876: Սըր Ուիլեմըմ Համիլթըն, շատ գիտնական Անգղիացի մը, ներկայ գտնուեցաւ մեծ բորբոքման մը ժամանակ 109 տարի առաջ: Կ'ըսէ թէ կրակի մեծ սիւն մը պայթելով վեր ուղը նետուեցաւ երկու միլոն բարձր, և լոյսն այնչափ պայծառ էր որ ամենափոքր առարկան կրնար տեսնուիլ գիշերը լեռնէն վեց միլոն հեռուանց: Ծուխը բոցէն մէկ միլոնէ աւելի բարձր կ'ելլէր:



ՎԵՍՈՒՎ ԼԵՌ

Ուրիշ բորբոքման մը ժամանակ, ասկէ 94 տարի առաջ, կը հաշուուի թէ 46 միլիոն խորանարդ ոտնաչափ լավա վազեց, որ բաւական է 1 միլոն երկայն 10 ոտնաչափ լայն և գրեթէ 900 ոտնաչափ բարձր բլուր մը շինելու: Հրաբուխին բորբոքումէն առաջ սովորաբար սաստիկ երկրաշարժ կ'ըլլայ, և երկրաշարժը և լավան կորսնցուցած են հազարաւոր մարդկային կեանքեր: Վեսուվ լեռը միայն 10 միլոն հեռու է Նափոյի քաղաքէն, այնպէս որ շատ ճամբորդներ Նաբոլիէ կ'երթան այցելել զայն: Այս աւելի դիւրացած է հիմա վասն զի երկաթուղի մը շինուած է որ կը հանէ գրեթէ լեռան մինչև գագաթը:

Սիրելի փոքրիկ գառնուկներ, Ահա դարձեալ մի նոր տարի իւր բարեօք և օրհնութեամբ ձեզ կը դիմաւորէ, և դուք խնդութեամբ և յուսալից կը թեւակոխէք ի նա: Կը փութամ շնորհաւորել ձեր նոր տարին մաղթելով որ երջանիկ և օրհնութիւնաբեր տարի մը ըլլայ այն ձեզի. և որովհետև կը հաւատամ թէ այս պատուական թերթը նոր տարին ձեզի հաճելի և օգտակար ընելու ազգեցիկ միջոցներէն մին է, պիտի խնդրեմ նուրա Արժ. Խմբագրէն որ և ինձ տայ ձայն, նորա միջոցաւ տալ ձեզ երբեմն այնպիսի թեղադրութիւններ, որ կը յու-

“ՀՈԳ ԶԷ”

Սիրելի փոքրիկ գառնուկներ, Ահա դարձեալ մի նոր տարի իւր բարեօք և օրհնութեամբ ձեզ կը դիմաւորէ, և դուք խնդութեամբ և յուսալից կը թեւակոխէք ի նա: Կը փութամ շնորհաւորել ձեր նոր տարին մաղթելով որ երջանիկ և օրհնութիւնաբեր տարի մը ըլլայ այն ձեզի. և որովհետև կը հաւատամ թէ այս պատուական թերթը նոր տարին ձեզի հաճելի և օգտակար ընելու ազգեցիկ միջոցներէն մին է, պիտի խնդրեմ նուրա Արժ. Խմբագրէն որ և ինձ տայ ձայն, նորա միջոցաւ տալ ձեզ երբեմն այնպիսի թեղադրութիւններ, որ կը յու-

սամ թէ օգտակար պիտի ըլլան ձեզ, և ձեր ի լաւ անդր զարգացման նպատակով: Այս անգամ նոր տարւոյն առթիւ կ'ուզեմ ձեր ուշադրութեան ներկայել հետեւեալը որ կարծեմ մեծապէս օգտակար պիտի ըլլայ ձեզ նոր տարին մեծ զգուշութեամբ և լաւ պատրաստութեամբ սկսելու:

«Կը ցաւիմ, զաւակս, որ կը տեսնեմ թէ բարկութեան տեղի կու տաս», ըսաւ կաթողին մայր մը իւր զաւկին, երբ նա այնինչ սկսած էր կենաց հրապարակին մէջ քայլեր առնուլ: «Հոգ չէ», պատասխանեց տղան բարկացոյց աչքերով և գնաց մէկդի:

«Եթէ ջանք չընես լաւագոյն ուսանելու, կը վախնամ թէ ագէտ մէկը պիտի ըլլաս», ըսաւ հաւատարիմ ուսուցիչը: «Հոգ չէ», մրմուռաց տղան քթին տակէն և դարձաւ մէկ դի:

«Այդ տղայք քեզի աղէկ ընկերներ չեն», դիտեց քարոզիչը գորովալից շարժմամբ: «Հոգ չէ» եղաւ դարձեալ խորոխ տղուն պատասխանը:

«Գինի խմել վտանգաւոր բան է և կրնայ կործանել ըլլալ քեզի», ըսաւ իւր սրտակից բարեկամը զայն զգուշացունելով: «Հոգ չէ» էր տակաւին յամառեալ պատասխանը:

Քանի մը տարի ետքը այս տղան եղաւ անպիտան գինեմոյ մը, ընկողմեալ ամէն տեսակ զեղխութեանց և շուտաւ տուժեանց մէջ, և ի վերջոյ չարագործութեանց և ոճրագործութեանց թշուառ կեանքով մեռաւ առանց յուսոյ:

Այս պատմանոյն կործանման պատճառն այն աւերիչ «Հոգ չէ»ն եղաւ. որպէս նաև է ուրիշ հազարաւորաց և բիւրաւորաց կործանման պատճառը: Կը տեսնե՞ս տղայ մը որ «Հոգ չընելու» հակամիտութիւնն ունի. գիտցիր որ անոր կործանումը սկսած է: Իւր շատ չանցած պիտի տեսնես այնպիսին խեղճ և անարգ, թշուառ և անպատիւ, կարօտ և յուսահատ. և արագահաս, անյոյս մահ մը պիտի գայ կրքել նորա դառնացեալ կեանքը առաւել ևս թշուառութեանց համար:

Տղայք, արթուն կեցեք և հսկեցեք այս կործանիչ «Հոգ չէ»ին դէմ. փախե՛ք անկէ և մի թողուք որ նա տեղ գտնէ ձեր սրտին մէջ, կամ սահի ձեր շրթանց վրայէն. Գնա՛ր հոգ արեւոյն հետեւ և աղէկ ընելու. և հոգ քեզ երբ փախ կամ էէր քեզ է: Այս է ձեր ապահովութիւնը: Չեր բարեկամը Գ. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.

ՉԳՋԻԿ

Չիղջը կամ չղջիկը զարմանալի արարածներ են, վասն զի ունին թևեր որովք կը թռչտին դիւրաւ և արագ, մինչ անոնց մարմինները կը նմանին մկան մարմնոյ, և կը գիւնցունեն իրենց ձագերը (կաթ կը ծծցունեն անոնց): Ասոր համար գիտունք չորքոտանեաց կարգը կը դասեն զանոնք, տարով անոնց մասնաւոր անուն մը որ կը նշանակէ ձեռնաթև: Անոնց մարմինները ծածկուած են մազով, բայց թևերն են պար-

Այս տեսակն է պատկերին մէջ ցուցուածը, քնչպէս կ'երևի ցերեկը, կախուած ծառի մը ճիւղէ իւր ետևի սրունքին ճիրաններէն: Այս չղջկան գլու-



ՉԳՋԻԿ

զապէս լերի մոռկէ, և այնպէս ջրուտ որ անոնց շոշափման զգայարանքը շատ զգայուն է:

Չղջիկը շատ տեսակ են որոց շատ միջատներով կ'ապրին: Բուերուն նման կը քնանան ցերեկը, և գիշերը օդին մէջ կը թռչտին, և կը բռնեն օդին մէջ գտնուող միջատները: Կայ տեսակ մը չղջիկ Հարուային Ամերիկայի մէջ որ երբ կը սակայուի անօթութեան, երբեմն արիւն կը ծծէ քնացող կենդանիէ մը կամ մինչև իսկ մարդէ:

Ամենէն մեծ տեսակ չղջիկը կը գլուտուի ճապա կղզոյն մէջ, և կը կոչուի արուէս-չղջիկ կամ թռչող արուէս:

Ինչ և մարմնը մէկ ոտնաչափէ աւելի երկայն են, և գոյնն է կարմիրի մօտ թուի նման արուէսներէն ոմանց: Սուրբարար արուէս-չղջիկը կը գտնուին մեծ խումբերով, և կ'ապրին պտղով, վասն սրոյ կը համարուին մեծ աղէս: «Երևակայէ՛», կ'ըսէ հեղինակ մը, «թէ ինչ փոս կու գար եթէ դրացիներու գկատուները և անտառին բոլոր ճագարները կարող ըլլային թռչելով միայն և մասնաւոր և ուտելին հատցունելին քու ինսամով համբարած բոլոր պարկեներդ»: Բնիկներն ստիպուած են ծածկել իրենց պատուները կողմն-

րու մէջ զանոնք պահպանելու համար չլքուանց դէմ:

Յուրա կրիմայից մէջ չլքուանց կը հաւաքին հին աւերակաց կամ մթին քարանձաւներու մէջ, և կը մնան թմրեալ բոլոր ձմեռը: Սատուածայնին մէջ չլքուանց անմաքուր կենդանեաց կարգը դատուած է (տես Ղևտ. ԺԱ. 19, և Ես. Բ. 20), և պատկերահանք կը ներկայացունեն Սատանան անփետուր թևերով: նման չլքուանց:

ՎՐԱՆ ՄԻ ՆԱՅԻՔ

Մենք ամենքս ալ թէ՛ չափահաս թէ՛ մանուկ, ունինք որ և է տեսակէ փորձութիւններ: Սատանան միշտ կը փորձէ զմեզ ընել չար բան մը: Շարունակ չար խորհուրդներ կը փափայ մեր ահանջաց, փորձութիւններ կը դնէ մեր ճամբուն վրայ, և երբ կարող կ'ըլլայ մեզի նայել տալ մեղաց վրայ, կրնայ շուտով գործել տալ գայն: Վասն որոյ կ'ըսեմ ամենուն, «Վրան մի՛ նայիք»: Որչափ շատ անգամ Սատանան կը փորձէ տղաքը առնուլ չաքար կամ պաքսիմաթ պընակէն, երբ ոչ ոք կը նայի իրենց վրայ: Եւ շատ անգամ փորձութիւն է նայիլ սնտուկի կամ տիոյ մը վրայ ուրում դպչել արգելուած է տղայոց, նաեւ արգելուած տեղոյ մը վրայ: Սատանան ինչպէս կը դնէ այն փորձութիւնը: Ահա՛ այսպէս. — նախ փափաք կը յարուցանէ մանկան սրտին մէջ, և յետ այնորիկ նայել կու տայ արգելուած բանին վրայ, և եթէ տրդան մէկդի նայի, տարակոյս չկայ թէ նա պիտի ուղչէ ընել ինչ որ չէ ուղիղ:

Սատանան նոյն կերպով կը վարուի չափահաս անձանց հետ ալ: Նախ քալել կու տայ անոնց չարաց ճամբուն մէջ. և երբ անոնք կ'ընեն ինչ որ կ'ուղչէ նա, կը փափայ անոնց կանգ առնուլ և տեսնել չարութիւնը քիչ մը ևտ և յետոյ տակաւ կը նստեցունէ զանոնք անոր մէջտեղը: Ո՛հ, ի՛նչպէս աւելի սպահով կ'ըլլային անոնք եթէ միայն նայէին փորձութեան վրայ:


Ես անգամ մը դաս մը սորվեցայ մեր շնիկէն: Հայրս սովոր էր կտոր մը միս կամ պաքսիմաթ դնել տախտակամածին վրայ շան մօտ, և կ'ըսէր «Ոչ», և չունը գիտէր որ պէտք չէր դպչել անոր: Բայց չունը բնաւ չէր նայեր մին վրայ: Չէր նայեր, և կը թուէր թէ գիտէր որ եթէ նայէր անոր վրայ, փորձութիւնը պիտի զօրանար և ըլլար անդիմադրելի, ուստի միշտ կը նայէր հօրս երեսը աչքերն անոր տակած: Օր մը մարդ մը կը ճաչէր մեր հետ, և ըսաւ. «Ահա մեզ

ամենուս դաս մը: Բնաւ նայիլ փորձութեան վրայ: Միշտ նայել Տէրոջն երեսը:»

Այո, այս է հին պատուէրը. Մի՛ նայիլ փորձութեան վրայ: «Անկէ խոտորէ ու անցիր»: Երբ չարութիւն մը գործելու խորհուրդը որ և իցէ կերպով կու գայ սրտիդ մէջ, որչափ և փոքր բան ըլլայ, անտարակոյս Սատանայէն է այն, ուստի մի՛ նայիլ անոր վրայ, այլ նայէ վեր երկինք, և խնդրէ պահել զքեզ և յաղթութիւն տալ քեզ ամէն փորձութեան վրայ, անոր միջոցաւ որ սիրեց զքեզ:

ևաւ. անոր համար կը կոչուի «Արիւնահեղ Մարիամ» տիտղոսով:

Արիւնահեղի պատրաստութիւնն եղաւ մեծ խնամով, և առաջին տարին ճամբայ կ'ելլէր եթէ Անդղիացի արիւնահեղ նաւապետը Տրէյք չընէր անպետիղի նաւահանգստին մէջ և չկորսնցունէր 100 ի չափ նաւեր: Երբ վերջապէս ճամբայ ելաւ նաւատորմիդը, սա կը բաղկանար 129 խոշոր նաւերէ որ կը կրէին առաւել քան 2,000 թընդանօթ և իրր 20,000 ղինուոր և 8,000



ՍՊԱՆԻԱԿԱՆ «ԱՐԲԱՏԱ»ՅԻ ՆԱԻԲԵՆ ՄԻՌՆ ԺԱՅՆԵՐԻՆ ԶԱՐԿՈՒԹԵԼ

ՍՊԱՆԻԱԿԱՆ «ԱՐԲԱՏԱ»Ն

Արիւնահեղի յաւանական բաւ է որ կը նշանակէ նաւատորմիդ, բայց հասարակորէն կը գործածուի այն մեծ նաւատորմին համար զոր Ֆիլիբ Բ. Սպանիոյ թագաւորը զրկեց նաւաճելու համար զԱնդղիա 1588ին: Անոր շարժառիթն էր տալ մահացու հարուած մը Բողոքականութեան որոյ հզօրագոյն պաշտպանն էր Անդղիա: Այն ժամանակ Անդղիոյ դահը կը նստէր Երիտասարդ թագուհին, որոյ երէց քոյրը, Մարիամ, Ֆիլիբ Բ. ի կին եղած էր: Մարիամ կաթողիկէ էր, և մինչ էր թագուհի, շատ Բողոքականներ սպաննել տուաւ անոնց կրօնքին պատճառաւ:

Նաւատի, բայց ի գերիններէ՛ նաւերը թիափարեիւ համար: Սպանիացոց նպատակն էր երթալ Պերճիոյ ծովեզրը և առնուլ անկէ 35,000 զօրք ևս որոց ամբողջը պիտի դրուէր մեծահամբաւ զօրավարի մը հրամանատարութեան ներքեւ: Անդղիացիք պատրաստեցին 180 նաւ, 18,000 ընտիր զինուորներով, բայց անոնց նաւերը Սպանիացոց նաւերէն մանր էին և չէին կրեր այն պիտի ծանր թնդանօթներ: Կովեզրքն ունէին երկու բանակ, մին՝ արգելելու համար Սպանիացիները ցամաք ելլելէ, և միւսը՝ պաշտպանելու համար իրենց թագուհին:

Յուլիս 29 ին Սպանիական նաւա-

տորմիլը մտաւ Անգղիական Չրանքը, և մարտն սկսաւ յարող օրը: Անգղիացի ծովակալը չթողուց թշնամուցն մղել ընդհանուր պատերազմ, բայց շարժմ մը չարունակուեցաւ կռիւր, յորում Սպանիացիք տառապեցան մեծապէս: Յետոյ յաջողեցան հասնել Բալէի նաւահանգիստն ի Գաղիա, բայց Անգղիացիք 8 բռնկած նաւեր զրկեցին հոն, և Սպանիացիք ստիպուեցան ծոփն ելլել դարձեալ, և յաջող օրը Անգղիացիք հարածեցին զանոնք, երբ Սպանիացիք կորսնցուցին իբր 4,000 մարդ և շատ նաւեր: Սպանիացի ծովակալը փոխանակ ջանալու յառաջ քալել դարձեալ Անգղիական Չրանքէն, որոշեց մանաւանդ նաւարկել Սկովտիլը շուրջը հիւսիսային կողմէն, և այն ճամբով վերստին դառնալ Սպանիա: Օրէն աննպաստ լինելով Անգղիացիք արգելուեցան զանոնք հարածելէ, բայց երբ Սպանիացիք հասան Սպանիա, միայն 54 նաւ մնացած էր, և 9,000 է մինչև 10,000 մարդ հիւանդ և կարօտ՝ ողորմելի վիճակի մէջ:

Պատկերը կը ցուցնէ Արտաշի նաւերէն մին ժայռերուն զարնուած:

ՈՍԿԵՐԵՐԱՆ

Կ'ուզէ՞ք ճանչնալ ճշմարիտ դիւցազն մը, կարգացե՞ք ուրեմն տա պատմութիւնը Ռսկերբերանու Հռոմայեցի կայսեր առջև որ սպառնացած է անոր արքայ եթէ տակաւին մնար Բրիտանիայ: «Դուն չես կրնար արքայրել զիս», ըսաւ Ռսկերբերան, «վասն զի աշխարհ իմ Հօրս տունն է»: «Բայց ես կը սպաննեմ քեզ», ըսաւ կայսրը: «Ոչ, դուն չես կրնար սպաննել զիս», ըսաւ քաջարի Բրիտանիան, «վասն զի իմ կեանքս պահուած է Բրիտանոսի հետ Աստուծոյ քով»: «Ես կ'առնում քու դանձերդ», սպառնացաւ կայսրը: «Ոչ, չես կրնար, վասն զի նախ, քու ըսած բաներուդ մէկը չունիմ: Իմ գանձս երկինքն է. և իմ սիրտս հոն է», պատասխանեց նա: «Բայց ես պիտի վանեմ քեզ մարդոց մէջէն, և դուն պիտի չունենաս բարեկամ», շարունակեց ըսել Հռոմայեցին: «Այդ ալ չես կրնար», անգամ մի ևս պատասխան տուաւ աղանի Բրիտանիան, «վասն զի ես երկինքն ունիմ բարեկամ մը որմէ կարող չես բաժնել զիս: Առ ոչինչ կը գրեմ քու սպառնալիքներդ. չկայ բան մը զոր կարող ըլլաս ընել ինձ վնասուր համար»: Ո՛չ ապաքէն Ռսկերբերան էր հողակապ վաղեմի Բրիտանիայի դիւցազն մը:

ՁԻՆՆԱԳԻՆՍԱԿ ՆԵՏԵՆ ՍԱՍ ՍԳՈՅԻ ՎՐԱՅ

Յարմար ժամանակ էր ձիւնադընտակ խաղալու: Ձիւնն էր բաւական խոնաւ և լաւ կը փակէր գնտակներ չինելու համար:

«Եկուր, Նէտ», ըսաւ Չարլի փրէնթընը իւր եղբոր, «ահա կ'երթայ ծեր Սամ Սքոթ, բողբոլին գինով, եկուր բարեկէք զնա երբ մօտէն անցնի»: Տղաքն այսպէս թոյլ տալով որ խաղի սէրը յաղթէ իրենց արհուլթեան, առանց ունենալու նպատակ ընել վրնասակար բան մը, պատրաստուեցան բարեկէլ զծերունին: Եւ իրօք, ի՞նչ վնաս կար անոր մէջ: «Բան մը չէ նա եթէ ոչ ծերունի գինով մը», ըսաւ յետոյ Չարլի: Այսպէս մինչ ծերունին կը մօտենար դեղեւող քայլերով, ընդունեց ձիւնադնտակներուն հարուածը, մէկ, երկու, երեք անգամ լաւ խտացած գնտակներ նետուելով անոր իրարու ետեւ արագ:

Այն ատեն մեղմ ձայն մը եկաւ տանը դռնէն որ սարսափով կը կանչէր: «Տղա՛ք, տղա՛ք»

Եթէ տղոց մտքին մէջ կենար խորհուրդ թէ շիտակ չէր իրենց ըրածը, անշուշտ հիմա պիտի հասկընային, երբ լսեցին իրենց մօր ձայնը: Տղաքն իսկոյն իրենց մօր հետ տան դռնէն ներս մտան, և երբ նա ցուցուց թէ որչափ սարսափած էր անոնց ըրածին վրայ, Չարլի ըսաւ իւր բնական անկեղծութեամբ. «Ինչո՞ւ, Մայրիկ, գինեմով Սամ Սքոթն է այն»: Որուն պատասխանեց մայրը.

«Տղաք, մտիկ ըրէք և ձեզի պատմութիւն մը ընեմ: Երբ ձեր մեծ հայրը տղայ էր, ունէր բարեկամ մը զոր կը սիրէր աւելի քան իւր բոլոր միւս ընկերները: Միշտ մէկտեղ կը գտնուէին: Մարդիկ կը կոչէին զնոսա երկուորեակ եղբայրներ: Անոնց հայրերն էին ընկեր առեւտրոյ մէջ, և հասարակութիւնը սովոր էր ըսել թէ ուր որ տեսնես մին, կը տեսնես միւսն ալ: Այսպէս էր բանը մինչև որ տղաքն եղան երիտասարդ. և այն ատեն գործի մասին իրենց ճաշակը տարբեր ըլլալով զատուեցան իրարմէ: Բայց անոնց մանկութեան բարեկամութիւնը տակաւին կը տևէր և միշտ մեծագոյն բերկրութիւն կը զգային երբ կը հանդիպէին իրարու: Բայց շատ ժամանակ անցնելէն ետքը հասկեցաւ ձեր մեծ հայրը ցաւով թէ իւր բարեկամը գինեմովութեան տուած էր ինք զինք ի զուր աշխատեցաւ իւր բարեկամը հրաժարեցունել սոյն ստակալի ունաւ

կութեանէն: Նա գէշէն աւելի գէշին կ'երթար, մինչև որ եղաւ փողոցի գինեմով մը: Վասնեց իւր հօր թողած չափաւոր ստացուածքը և շատ չանցած եղաւ չքաւոր: Ո՛րչափ յաճախ լսած եմ քու մեծ հօրդ ողբալը իւր մանկութեան բարեկամին ցաւալի կործանման վրայ»:

«Մայրիկ, մայրիկ, մի գուցէ Սամ Սքոթն ըլլայ այդ», յուզեալ աղաղակեցին տղաքը նոյն ժամանակ: «Այո՛, տղաք», այն ծերունի գինովը որուն այս առաւօտ ձիւնադնտակ նետեցիք, ձեր մեծ հօր մանկութեան բարեկամն էր. և նա լսած եմ որ կ'ըսէր շատ անգամ, երբ կը տեսնէր քու և Նէտի խաղան ի միասին, «Մենք ալ ճիշդ այդպէս էինք Սամի հետ: Այն ատեն կը հառաչէր, և գիտեմ թէ ինչ կը խորհէր»: «Ըսեմ քեզի, Նէտ, թէ ինչ ընելու ենք», պողաց Չարլի յուզեալ ձայնով, «ամբողջ սակաւ մը լեցունենք աղէկ բաներով անոր տալու համար: Մեզի համար կը պատրաստես զայն, այնպէս չէ՞, մայրիկ: Եւ մենք կ'ըսենք անոր թէ այս Նէտ Հարիլը թոռներուն նուէրն է»:

Տիկին փրէնթըն ժպտուն գէմքով կը գիտէր իւր տղաքը, երբ քիչ մը ետքը դռնէն դուրս ելան իրենց դասուկին մէջ ունենալով մեծ սակաւ մը: Երբ ծերունին ընդունեց տղոց այն նուէրը, սրբեց իւր աղօտացած արտաւերտուն արտասուքը դողդոջուն ձեռքով, և տղաքը անոր միայն «Նէտ», ըսելը լսեցին: Անկէ քանի մը օր ետքը տղաքը տնէն ներս վաղեցին «կեցցէ՛, կեցցէ՛», աղաղակելով, և իրենց գլխէն վեր բարձրացուցած կը շարժէին թղթի կտոր մը: Թղթաղբամ էր այն: Ո՛չ, այլ ուխտագրութեան գիր մը՝ չիսնել գինովցուող ըմպելիք, և ստորագրուած «Սամ մուէլ Սքոթ» անունը: «Ո՛չ, երանի՛ թէ մեծ հայրս տեսնէր զայս», ըսաւ Նէտ:

Այս դէպքէն ետքը ամէն տղայ կը թուէր թէ բարեկամ էր ծերունի Սամի: Վասն զի նորա երիտասարդութեան ցաւալի պատմութիւնը ծանօթացաւ ամենուն, և տղաք ամէնքն ալ ընկերութիւն մը կազմեցին օգնել անոր: Ծերունին հիմա եկեղեցի երթալէ ետ չկենար, և արդարեւ եղած է նորոգեալ մարդ մը. անտարակոյս դարձեալ պիտի երթայ գտնել իւր հին բարեկամը, և ասոր հայրը կը ջանայ կ'աշխատի հաւասարութեամբ Ո՛վ կ'ըսէ թէ պիտի չյաջողի նա:

Ամերիկայի Միտիոնարոց ընկերութեան հրատարակած, Արտօմատէր ընկերութեան հրատարակած, Տնօրէն—Սմազպիւր Գ. Ս. Պ. Պ. Ե. Լ. Մ. Ֆիլիպս, Ֆինանսներու եղբուշու, Ամերիկան Իսան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՒ ԳՈՅԱՅԵԱՆ